II

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՐՈՇԱԿԱԿԻՐԸ
(Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակի առթիվ)

ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍՅԱՆ

Լրացավ վաստակաշատ գիտնական, արվեստի պատմաբան և գեղարվեստի քննադատ, Հայաստանի կերպարվեստի թանգարանի (1947-ից՝ Հայաստանի պետական պատկերասրահ, 1991-ից՝ Հայաստանի ազգային պատկերասրահ) առաջին տնօրեն, Հայկական ԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1945 թ.) Ռուբեն Գրիգորի Դրամբյանի (1891–1991) ծննդյան 125-ամյակը: Ստանալով փայլուն կրթություն, լինելով լայն մտահորիզոնի, պրոֆեսիոնալ խոր գիտելիքների և գեղագիտական նուրբ ճաշակի տեր, բարոյական բարձր հատկանիշներով օժտված, պահանջկոտ ու սկզբունքային, բայց և դիմացինի հանդեպ նրբանկատ անձնավորություն, նա արժանապես մեծ հարգանք ու անառարկելի հեղինակություն էր վայելում շատերի կողմից, ում բախտ էր վիճակվել մոտիկից ճանաչելու, համատեղ աշխատելու կամ շփվելու նրա հետ: Ծանրակշիռ ու նշանակալից է Ռ. Դրամբյանի ներդրումն ինչպես հանրապետությունում թանգարանային գործի կազմակերպման բնագավառում, այնպես էլ հայ արվեստաբանական մտքի ձևավորման ու զարգացման ասպարեզում, ինչն իր արտացոլումն է գտել նրա գրքերում և մենագրություններում, հոդվածներում ու զեկուցումներում, Հայաստանի կերպարվեստին նվիրված պատմական ակնարկներում:



Մարտիրոս Սարյան. Ռուբեն Դրամբյանի դիմանկարը (1934 թ.)

Ռ. Դրամբյանը ծնվել է 1891 թ. հունիսի 29-ին Ալեքսանդրապոլում (ներկայիս Գյումրի), մտավորականների ընտանիքում: 1909-ին գերազանցությամբ ավարտելով Թիֆլիսի գիմնազիան՝ ընդունվում է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, ուր սովորում է մինչև 1914 թ.: Ուսանողական արձակուրդների ընթացքում հաճախ շրջագայում է Եվրոպայում՝ լինում Ֆրանսիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Գերմանիայում և այլուր, որտեղ ծանոթանում է այդ երկրների գեղարվեստական մշակույթի ու, մասնավորաբար, կերպարվես-

տի հետ: 1916 թ. նա զինակոչվում է՝ հաճախելով ռազմածովային նավատորմի սպայական դասընթացների: 1917 թ. աշնանը՝ Հոկտեմբերյան հեղափոխության նախաշեմին, Վլադիվոստոկից դեպի Ճապոնիա կատարած ուսումնական նավարկությունից հետո, Ռ. Դրամբյանը վերադառնում է Պետրոգրադ, ուր ծառայության է անցնում Բալթիական նավատորմի շտաբում որպես դեկապետ, ապա՝ էսկադրոնային ականակրի հրամանատարի օգնական:

Կերպարվեստի, ինչպես նաև թատրոնի ու երաժշտության հանդեպ հետաքրքրությունը, որը սկիզբ էր առել դեռևս Թիֆլիսում և էլ ավելի խորացել ուսանողության շրջանում՝ Պետերբուրգի մշակութային կյանքի հնոցում, այսուհետ ձեռք է բերում տևական կայուն՝ մասնագիտական բնույթ: Դրան մեծապես նպաստում են նաև Ռ. Դրամբյանի բարեկամական հարաբերություններն ու անձնական կապերը ռուս նկարիչների և արվեստագետների, առավելապես «Мир искусства» *(«Արվեստի աշխարհ») ստեղծագործական միավորման ներկայացուցիչներ՝ Ալեքսանդր Բենուայի, Կոնստանտին Սոմովի, Եվգենի Լանսերեի, Աննա Օստրոումովա-Լեբեդևայի, Ստեպան Յարեմիչի և այլոց հետ:*

Զորացրվելուց հետո, սկսած 1921 թվականից, Ռ. Դրամբյանն աշխատում է Պետրոգրադի Ռուսական թանգարանում, որտեղ ստանձնում է գեղարվեստական բաժնի ավագ գիտաշխատողի պարտականությունները և ղեկավարում պահեստային հավաքածուների բաժինը:

1923-ի աշնանը գալով Երևան՝ Ռ. Դրամբյանը ծանոթանում է հայ մշակույթի ականավոր գործիչների՝ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի, գեղանկարիչ Մարտիրոս Սարյանի, բանաստեղծ Եղիշե Չարենցի և այլոց հետ, ովքեր նրան հորդորում են տեղափոխվել Երևան ու գործնականորեն նպաստել Կերպարվեստի թանգարանի ստեղծմանը: Ու երբ մեկ տարի անց Ռ. Դրամբյանն ստանում է Հայաստանի լուսավորության ժողկոմ Ասքանազ Մռավյանի հրավերը՝ Հայաստանի պետական թանգարանի[1] արվեստի բաժինը ղեկավարելու առաջարկութ-

---

[1] *Պատմության, հնագիտության, ազգագրության, արվեստի, ինչպես նաև հեղափոխական շարժման պատմության բաժիններից բաղկացած Հայաստանի պետական թանգարանը հանրապետության կառավարության որոշմամբ հիմնադրվել է 1921 թ. օգոստոսի 21-ին, բայց մշակութային այդ օջախի պաշտոնական բացումը տեղի է ունեցել ավելի ուշ՝ 1922 թ. նոյեմբերի 7-ին, Հոկտեմբերյան տոնակատարության օրը (տե՛ս* А. А в а к я н. Из истории художественной жизни Армении. 1920–1932. Ереван, 2002, с. 163 и 167*): Երևանում նմանատիպ թանգարան ստեղծելու փորձեր են արվել նաև նախկինում՝ մինչև Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը: Այսպես, 1919 թ. մայիսի 25-ին, Հայաստանի Առաջին հանրապետության անդրանիկ տարեդարձի առիթով, Երևանի նոր գիմնազիայի (հետագայում՝ Խ. Աբովյանի անվան դպրոց) շենքում կայացավ 1916-ին Թիֆլիսում հիմնադրված Հայ արվեստագետների միության հերթական՝ թվով երրորդ ցուցահանդեսը,*

յամբ, նա անմիջապես համաձայնվում է և շուտով տեղափոխվում Երևան:

Ի սկզբանե Հայաստանի պետական թանգարանի (1935-ին այն բաժանվեց ինքնուրույն մի քանի թանգարանների, որոնցից մեկն էլ Հայաստանի կերպարվեստի թանգարանն էր) կորիզն էին կազմում հայկական, ռուսական և արևմտաեվրոպական արվեստի հավաքածուները, որոնք պարբերաբար, ըստ հնարավորության, համալրվում էին նոր ստեղծագործություններով: Այստեղ են բերվում Էջմիածնի վանքի հնագիտական թանգարանի նմուշները, այդ թվում՝ XIX դարի հայ նկարիչների կտավները: Նույն տարիներին Հայաստանի պետական թանգարանի հայկական բաժնում տեղ են գտնում շուրջ երկու տասնյակ ստեղծագործություններ, որոնք գնվում են Երևանի, Ստեփան Շահումյանի անվան կենտրոնական բանվորական ակումբում 1921 թ. հուլիսի 19-ին բացված՝ Հայ արվեստագետների միության հինգերորդ ցուցահանդեսից: Հայաստանի պետական թանգարանի արվեստի բաժնին են հանձնվում XIX–XX դարերի հայ վարպետների աշխատանքները, որոնք Մ. Սարյանը ձեռք էր բերել իր ծննդավայր Նոր Նախիջևանից, ինչպես նաև 1925 թվականին, արդեն Ռուբեն Դրամբյանի տնօրինության օրոք, Մոսկվայի Հայ մշակույթի տնից (նախկին Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան, իսկ 1919-ից՝ Հայկական ինստիտուտ) Երևան բերված՝ նոր ու նորագույն շրջանների հայ և ռուս նկարիչների կտավները, որոնք մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հանդիսանում էին մոսկովյան ազնվատոհմ ու մեծահարուստ հայերի, այդ թվում՝ Լազարյանների սեփականությունը:

Սակայն, ինչպես գրում է Ռ. Դրամբյանը, իր գոյության առաջին տարիներին Հայաստանի պետական թանգարանը «փակ էր այցելուների համար զետեղարանի բացակայության պատճառով՝ թանգարանը չուներ հարմար տարածքներ և ցուցասրահներ ու պահեստարանի տպավորություն էր թողնում: Ընդ որում արվեստի բաժնում արժեքավոր հուշարձանների հետ մեկտեղ քիչ չէին նաև գեղարվեստական նշանակություն չունեցող աշխատանքները: Ուստի, զարմանալի չէ, որ այցելուների վրա թանգարանը պետք է բացասական տպավորություն թողներ: Պահպանվել է 1924 թ. Հայաստան ժամանած ԽՍՀՄ Լուսժողկոմ Ա. Վ. Լունաչարսկու կարծիքը. «Խորհրդային առաջին տարիներին մեզանում բազմացան

որտեղ ներկայացված էին հայ նկարիչների և քանդակագործների շուրջ 250 ստեղծագործություններ: Դրանց կողքին ցուցադրված էին նաև Էջմիածնի վանքում գտնվող հայ միջնադարյան ձեռագիր մատյաններում զետեղված մի շարք մանրանկարների կրկնօրինակները: Հայաստանի ազգային թանգարանի հիմքերը դնելու նպատակով Առաջին հանրապետության կառավարությունը ցուցահանդեսից միանգամից մի քանի տասնյակ նկարներ և քանդակներ գնեց, որոնց մի մասն այսօր պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահի ֆոնդերում (տե՛ս Ա. Աղասյան. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX–XX դարերում, Երևան, 2009, էջ 75–76):

նման թանգարանները, բայց մենք դրանք բոլորն էլ փակեցինք»: 1923 թ. աշնանը, երբ ես կարճ ժամանակով Պետրոգրադից Երևան եկա, թանգարանն ինձ վրա ևս նույն տպավորությունը թողեց»[2]:

Աշխատանքի անցնելով Հայաստանի պետական թանգարանում՝ Ռ. Դրամբյանը նկատելիորեն աշխուժացրեց արվեստի բաժնի գործունեությունը: Մեկը մյուսի հետևից ցուցահանդեսներ էին կազմակերպվում, պատկերասրահը ձեռք էր բերում ռուս ու արևմտաեվրոպական վարպետների, ինչպես նաև հայ կերպարվեստի դասականների նորանոր ստեղծագործություններ: Ռ. Դրամբյանի ներքին կուլտուրայի, գեղարվեստական բարձր ճաշակի, նկարահավաքի սուր հոտառության, անձնական խառնվածքի ու բնավորության, Հայաստանի կերպարվեստի թանգարանի տնօրենի պաշտոնում նրա երկարատև նպատակասլաց ջանքերի և անմնացորդ նվիրումի շնորհիվ մշակութային այդ նորաստեղծ օջախն աստիճանաբար ոտքի կանգնեց, աճեց, ընդլայնվեց ու ճյուղավորվեց և գավառային անշուք, ոչնչով աչքի չընկնող, անխնամ պահեստարանից վերափոխվեց ու դարձավ Խորհրդային Միության գեղարվեստական առավել հետաքրքիր, ինքնատիպ, հարուստ և նշանակալից հավաքածուներից մեկը:

Հանրապետության Լուսժողկոմը պատկերասրահին լուրջ միջոցներ էր հատկացնում Մոսկվայի և Լենինգրադի թանգարանային ֆոնդերից ու պահոցներից, ինչպես և անհատ նկարահավաքներից ու գործող արվեստագետներից նկարներ և քանդակներ գնելու համար: Ստեղծագործություններից շատերն էլ թանգարանը նվեր էր ստանում հանրապետությունում և դրսում ապրող հայ վարպետների (Զ. Զաքարյան, Գ. Բաշինջաղյան, Փ. Թերլեմեզյան, Ա. Ֆեթվաճյան, Վ. Մախոխյան, Ե. Թադևոսյան, Տ. Եսայան, Է. Շահին, Վ. Գայֆեճյան, Մ. Սարյան, Հ. Գյուրջյան, Հ. Կոջոյան, Գ. Շարբաբչյան, Ռ. Շիշմանյան, Ս. Խաչատուրյան, Գ. Գյուրջյան և ուրիշներ), ինչպես նաև խորհրդահայ ու սփյուռքահայ արվեստասերների, նկարահավաքների ու նկարատու-բարերարների (Հ. Աղաբեկյան, Վ. Բարաքյան, Գ. Զամբախչյան, Հ. Էքիզլյան, Տ. Խան-Քելեքյան, Ռ. Խերումյան, Ա. Չոպանյան, Ա. Ջինջյան, Վ. Վահանյան, Ռ. Քաթանյան, Վ. Քանանյան և ուրիշներ) կողմից: Թանգարանին իրենց նկարներն են նվիրաբերել նաև ռուս անվանի արվեստագետներ Ա. Բենուան, Ի. Բրոդսկին, Ե. Լանսերեն, Դ. Կարդովսկին, Ա. Օստրոումովա-Լեբեդևան և ուրիշներ: Ուստի, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի կերպարվեստի թանգարանը ձևավորվում, ընդարձակվում և զարգանում էր մի կողմից հանրապետության կառավարության օժանդակության, Ռ. Դրամբյանի անձնական նախաձեռնության, արվեստագետների և բարերարների նվիրատվության շնորհիվ, իսկ մյուս կողմից՝ Մոսկվայի ու Լենինգրադի թանգարանային ֆոնդերից

[2] *Տե՛ս.* Р. Г. Д р а м п я н. Государственная картинная галерея Армении. М., 1982, с. 7.

ստացված ցուցադրանմուշների հաշվին:

Միանգամայն բնական է, որ Ռ. Դրամբյանը հատուկ նախապատվություն էր տալիս հայկական բաժնի ցուցադրությանը, որը պետք է ակներևաբար և իրազնորեն ներկայացներ հայրենական կերպարվեստի պատմական լայն համապատկերը, շեշտելով դրա գեղարվեստական բարձր մակարդակն ու ազգային յուրահատկությունները: Մի տանիքի տակ հավաքված հին որմնանկարների և մանրանկարների կրկնօրինակները[3], ուշ միջնադարից մեզ հասած ինքնակերպ սրբապատկերները, կրոնական սյուժեներով ու աստվածաշնչյան թեմաներով կտավները, XIX դարի պորտրետային և պեյզաժային նկարչությունը, ժամանակակից վարպետների ստեղծագործությունները բացահայտում ու ցուցահանում էին այդ ամենը կերտած հայ ժողովրդի գեղագիտական ընկալումների, գեղարվեստական լեզվի և մտածողության ուրույն, էական հատկանիշները: Այդպիսով, ինչպես նկատում է Ն. Քոթանջյանը, «վերականգնվեց հայ կերպարվեստի բազմադարյան զարգացման շղթայի կտրված օղակների կապը»[4]:

Պատկերասրահում զետեղելով ազգային կերպարվեստի խոշորագույն ներկայացուցիչների ստեղծագործություններն ընդգրկող մեծաթիվ հավաքածուն՝ Ռ. Դրամբյանը միևնույն ժամանակ գիտակցում էր, որ թանգարանն անհրաժեշտաբար պետք է ունենա նաև այլ երկրների ու ժողովուրդների, համաշխարհային կերպարվեստի հիմնական դպրոցների և ուղղությունների բնորոշ նմուշներ: Արդյունքում նրան հաջողվեց թանգարանի համար ձեռք բերել XVIII և XIX դարերի ռուս նկարիչներ Ի. Արգունովի, Դ. Լևիցկու, Ֆ. Ռոկոտովի, Վ. Բորովիկովսկու, Վ. Տրոպինինի, Օ. Կիպրենսկու, Կ. Բրյուլովի, Ա. Սավրասովի, Ն. Գեի, Ի. Շիշկինի, Վ. Պերովի, Ի. Կրամսկոյի, Ա. Կուինջիի, Վ. Վերեշչագինի, Վ. Պոլենովի, Ի. Ռեպինի, Վ. Սուրիկովի, Ի. Լևիտանի և այլոց տասնյակ կտավներ, ինչպես նաև

---

[3] *Մինչև 1950-ական թվականների սկիզբը Հայաստանի կերպարվեստի թանգարանը միջնադարյան պատկերազարդ ձեռագրերի ոչ մեծաքանակ, սակայն արժեքավոր հավաքածու ուներ, բայց հետագայում այն հանձնվեց Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանին: Թանգարանում մնացին միայն միջնադարյան հայ նկարչության մոնումենտալ հուշարձանների ընդօրինակությունները, որոնց ստեղծման վրա երկար տարիներ աշխատում էր նկարիչների մի ամբողջ կոլեկտիվ՝ ռուսական և հայկական կերպարվեստի ականավոր հետազոտող-մասնագետ Լիդիա Դուռնովոյի ղեկավարությամբ, ով 1936 թվականին ազատվելով աքսորավայրից՝ մեկ տարի անց Ռուբեն Դրամբյանի հրավերով տեղափոխվեց Երևան ու ամբողջապես նվիրվեց հայ միջնադարյան կերպարվեստի ուսումնասիրման գործին:*

[4] *Տե՛ս* Н. К о т а н д ж я н. Национальная галерея Армении и ее роль в формировании армянской школы изобразительного искусства.— *Ռուբեն Դրամբյանի (1891–1991) հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզեր, Երևան, 1996, էջ 6:*

այսպես կոչված Արծաթե դարի ռուս վարպետների՝ նոր դասականության, նոր ռոմանտիզմի, իմպրեսիոնիզմի, հետիմպրեսիոնիզմի և «մոդեռն» ոճի հետևորդներ Մ. Վրուբելի, Կ. Կորովինի, Մ. Նեստերովի, Վ. Սերովի, Լ. Բակստի, Կ. Սոմովի, Ա. Բենուայի, Վ. Բորիսով-Մուսատովի, Ն. Ռերիխի, Մ. Դոբուժինսկու, Բ. Կուստոդիևի, Կ. Պետրով-Վոդկինի և այլոց աշխատանքները: Պատկերասրահի ռուսական բաժնում հատկապես լավ է ներկայացված «Голубая роза» *(«Երկնագույն վարդ») և* «Бубновый валет» *(«Ագուռի վալետ») միավորումների անդամներ Ն. Ուլյանովի, Պ. Ուտկինի, Պ. Կուզնեցովի, Ն. Սապունովի, Ս. Սուդեյկինի, Պ. Կոնչալովսկու, Ի. Մաշկովի, Ա. Լենտուլովի, Վ. Ռոժդեստվենսկու, Ռ. Ֆալկի և այլոց ստեղծագործությունը: Այստեղ են պահվում ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային ավանգարդիզմի ականավոր ներկայացուցիչներ Վ. Կանդինսկու, Ն. Գոնչարովայի, Մ. Լարիոնովի, Պ. Ֆիլոնովի, Մ. Շագալի և այլոց գործերից մի քանիսը:*

Բավական հետաքրքիր է եվրոպացի վարպետների աշխատանքների ցուցադրությունը, որն ընդգրկում է գեղարվեստական առավել խոշոր և առաջատար դպրոցները՝ իտալականը (Յակոպո Տինտորետտո, Յակոպո Բասանո, Բերնարդո Ստրոցի, Ջովանի Գվերչինո, Ֆրանչեսկո Գվարդի, արձանագործ Անտոնիո Կանովա և ուրիշներ), ֆլամանդականը (Պիտեր Պաուլ Ռուբենս, Անտոնիս Վան Դեյկ, Յակոբ Յորդանս, Դավիդ Տենիրս Կրտսեր և ուրիշներ), հոլանդականը (Յան Վան Գոյեն, Պիտեր Կլաաս, Կասպար Նետշեր և ուրիշներ) և ֆրանսիականը (Լուի Լենեն, Ժան-Օնորե Ֆրագոնար, Ժան-Բատիստ Գրյոզ, Գյուստավ Կուրբե[5], «բարբիզոնյան դպրոցի» վարպետներ, քանդակագործներ Ժան Գուդոն, Էտյեն Մորիս Ֆալկոնե և ուրիշներ): Այդ բարձրարվեստ ստեղծագործությունների պատկառելի ժողովածուն Ռուբեն Դրամբյանին հաջողվեց հավաքել նաև շնորհիվ մոսկովյան ու լենինգրադյան արվեստագետներ և արվեստաբաններ Ա. Բենուայի, Ս. Յարեմիչի, Վ. Լևինսոն-Լեսինգի, Մ. Դոբրոկլոնսկու, Օ. Վալդգաուերի, Հ. Օրբելու, Պ. Ներադովսկու, Ա. Բակուշինսկու, Ա. Ֆեոդորով-Դավիդովի ու այլոց բարյացակամ վերաբերմունքի և աջակցության՝ մարդկանց, որոնց անունները նա երախտագիտությամբ էր հիշում ողջ կյանքի ընթացքում:

Թանգարանային հավաքածուն անընդհատ համալրելու, լրակազմելու և կոմպլեկտավորելու հետ մեկտեղ Ռ. Դրամբյանը պարբերաբար կազմակերպում էր ժամանակակից արվեստագետների ցուցահանդեսներ, որտեղ ներկայացված առավել ուշագրավ աշխատանքներն ընդգրկվում էին թանգարանային ֆոնդերում, ընդլայնելով և նորացնելով ցուցադրությունը: Նա իր ուշադրության կենտրոնում էր պահում նաև երիտասարդ մասնագետների՝ թանգարանային աշխա-

[5] *Գ. Կուրբեի «Աղջկա գլուխ» յուղանկարը Փարիզում գնել ու Երևան է բերել XX դարի հայ մեծ նկարիչ և քանդակագործ Երվանդ Քոչարը:*

տողների ու կերպարվեստի պատմաբանների նախապատրաստման և որակավորման կարևոր խնդիրները:

1951 թ. Հայաստանի պետական պատկերասրահը շուրջ երեք տասնամյակ ղեկավարած, իր 60-ամյակը դեռ չբոլորած Ռ. Դրամբյանն ստիպված թողնում է մշակութային այդ հաստատության տնօրենի պաշտոնը, քանի որ նրան մեղադրում են մերթ «նացիոնալիզմի» ու «կոսմոպոլիտիզմի», մերթ նույնքան խիստ քննադատության ենթարկված «ֆորմալիստների» ու «դեկորատիվիստների» (այդ թվում՝ Մ. Սարյանի) գովաբանության, նրանց արվեստի հանդեպ համակրական վերաբերմունքի մեջ:

Հայ կերպարվեստի ուսումնասիրությամբ Ռ. Դրամբյանն սկսում է զբաղվել 1920-ական թվականների վերջերից: Հանրապետական և միութենական մամուլում արդի արվեստի մասին հոդվածներ հրատարակելով՝ նա ժամանակ է գտնում նաև հայ միջնադարյան մանրանկարչությանը[6], Հովնաթանյանների նկարչական գերդաստանին նվիրված գիտական լուրջ հետազոտությունների համար: Նա ոչ միայն ինքն է անընդհատ գրում և հրատարակում իր հոդվածները, այլև այդ գործի մեջ է ներգրավում Մոսկվայի և Լենինգրադի ճանաչված մասնագետներին, այդ թվում այնպիսի խոշոր գիտնականների, ինչպիսիք էին Ալեքսեյ Սվիրինը և, հատկապես, Լիդիա Դուռնովոն՝ միջնադարյան հայ գեղանկարչությանը, մանրանկարին և քանդակին, դեկորատիվ-կիրառական արվեստին վերաբերող հիմնարար, այսօր էլ պահանջված, իրենց գիտական արժեքն ու նշանակությունը չկորցրած աշխատությունների հեղինակը:

1954-ին Ռ. Դրամբյանն աշխատանքի է անցնում Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորում (1958-ից՝ Արվեստի ինստիտուտ), որտեղ ղեկավարում է կերպարվեստի (1958–1962 թթ.), այնուհետև՝ կիրառական արվեստի (1962–1965 թթ.) բաժինները: 1955-ին՝ «Егише Татевосян. Жизнь и творчество» *դիսերտացիայի համար, նրան շնորհվում է արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: Այսուհետ նրա հետաքրքրությունների գլխավոր ոլորտն է դառնում նոր և նորագույն ժամանակների ազգային կերպարվեստը: Ռ. Դրամբյանի գրչին են պատկանում տվյալ դարաշրջանի հայ կերպարվեստի համակարգված, ժամանակագրական հերթականությամբ շարադրված, առանձին տեսակներով և ժանրերով ներկայացված պատմական*

[6] *Տե՛ս, օրինակ,* Очерки по истории искусства Армении. Сборник статей (раздел «Армянская миниатюра и книжное искусство»). М.–Л., 1939; предисловие к монографии А. Н. Свирина «Миниатюра древней Армении» (М.–Л., 1939); предисловие к альбому Л. А. Дурново «Древнеармянская миниатюра» (Ереван, 1953).

առաջին ակնարկները[7]*, ինչպես նաև XIX ու XX դարերի հայ նկարիչների և քանդակագործների մասին պատմող բովանդակալից մենագրությունները*[8]*: Նա մասնակցում է ԽՍՀՄ Գեղարվեստի ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության գիտահետազոտական ինստիտուտի նախաձեռնությամբ լույս տեսած* «Искусство народов СССР» *(Մոսկվա, 1972–1981) բազմահատորյակի ստեղծման աշխատանքներին, լինելով այդ հրատարակության խմբագիրներից և Հայաստանի կերպարվեստին նվիրված բաժինների հեղինակներից մեկը*[9]*: Ռ. Դրամբյանը եղել է նաև գիտական բազմաթիվ այլ հրատարակությունների խմբագիրը, հաճախ է հանդես եկել որպես գիտական փորձագետ ու մասնագիտական խորհրդատու: Նա անկեղծ հարգանք ու հեղինակություն էր վայելում ոչ միայն Հայաստանում, այլև հանրապետության սահմաններից դուրս: Նրան էին հայկական կերպարվեստի մասին հոդվածներ և պատմական ակնարկներ պատվիրում Սովետական մեծ հանրագիտարանը, միութենական այլ խմբագրություններ և հրատարակչություններ:*

Իր գործունեության մեջ Ռ. Դրամբյանը կարևոր նշանակություն էր տալիս գեղարվեստական քննադատությանը: Նա է հեղինակել խմբակային և անհատական տասնյակ ցուցահանդեսների կատալոգներում զետեղված ներածականները, ժամանակակից կերպարվեստի հրատապ խնդիրներին անդրադարձող հոդվածները, որոնցում տրված հակիրճ, բայց դիպուկ բնութագրումները և գնահատականները, դատողություններն ու դիտողություններն աչքի են ընկնում մտքի պարզությամբ և բանականությամբ: Նա արվեստի ստեղծագործության ինքնությունը հաստատող կամ մերժող բարձրակարգ, բազմափորձ որակագետ էր, ում երբեմն հպանցիկ հայացքն էլ բավական էր բնօրինակը նմանակումից տարբերելու, արվեստի այս կամ այն գործի հեղինակի անունը, ստեղծման մոտավոր տա-

---

[7] *Տե՛ս* Очерки по истории армянского изобразительного искусства (разделы: «Искусство XVII–XVIII веков» и «Искусство XIX – начала XX веков»). Ереван, 1979.

[8] *Տե՛ս, օրինակ, Ռ. Դրամբյանի «Եղիշե Թադևոսյան» (Երևան, 1955),* «Егише Татевосян» (М., 1957), *«Մարտիրոս Սարյան» (Երևան, 1960),* «Мартирос Сарьян» (М., 1964), «Акоп Коджоян» (М., 1960), «Александр Бажбеук-Меликян» (М., 1971), «Акоп Гюрджян» (Ереван, 1973) *մենագրությունները:*

[9] *Տե՛ս* История искусства народов СССР. Т. 2: Искусство IV–XIII веков (Искусство Армении. Раздел: «Торевтика»). М., 1973; История искусства народов СССР. Т. 3: Искусство XIV–XVII веков (Искусство Армении. Разделы: «Живопись, скульптура»). М., 1974; История искусства народов СССР. Т. 4: Искусство конца XVII–XVIII веков (Искусство Армении. Раздел: «Живопись»). М., 1976; История искусства народов СССР. Т. 5: Искусство первой половины XIX века (Искусство Армении. Раздел: «Изобразительное искусство»). М., 1979; История искусства народов СССР. Т. 6: Искусство второй половины XIX – начала XX века (Искусство Армении. Раздел: «Изобразительное искусство»). М., 1981.

րեթիվը կամ ժամանակը պարզելու համար:

Լինելով Հայաստանի նկարիչների միության հիմնադիր անդամներից մեկը՝ Ռ. Դրամբյանը մշտապես ընտրվել է ստեղծագործական այդ հաստատության վարչության կազմում, եղել արվեստագիտության սեկցիայի նախագահ: Արվեստագետներից շատերի հետ նա ընկերական սերտ հարաբերություններ ուներ: Նրանք, ում ժամանակին բախտ է վիճակվել ունկնդրելու Ռ. Դրամբյանին, այսօր էլ հիշում են նրա իմաստալից, խիստ կշռադատված, սկզբունքային զեկուցումներն ու ելույթները հանրապետության գեղարվեստական կյանքում ծառացած օրախնդիր հարցերի շուրջ:

Ռ. Դրամբյանն զբաղվում էր նաև մանկավարժական գործունեությամբ: 1940 թվականից ի վեր նա արվեստի համընդհանուր պատմության և ռուսական արվեստի պատմության դասընթացներ էր վարում Գեղարվեստական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում, Պոլիտեխնիկական ինստիտուտում և Պետական կոնսերվատորիայում՝ ուսանողներին փոխանցելով իր հարուստ փորձի ու լայն գիտելիքների պաշարները: Վերոհիշյալ առարկաները, հատկապես ռուսական արվեստի պատմությունը, Ռ. Դրամբյանը խորապես յուրացրել էր ոչ միայն դասագրքերի և մասնագիտական գրականության միջոցով, այլև բնօրինակները սեփական աչքերով տեսնելու, դրանց հետ անմիջականորեն ծանոթանալու, դրանք ինքնուրույն ուսումնասիրելու շնորհիվ: Դասախոսությունների ու սեմինար պարապմունքների ընթացքում նա ոչ միայն շարադրում էր կերպարվեստի փաստացի պատմությունը կամ վերլուծում ներկայացվող ստեղծագործությունները, այլև ուսանողներին հետաքրքիր, խրատական կամ զվարճալի պատմություններ պատմում հայ և ռուս նշանավոր արվեստագետների, արվեստաբանների ու նկարահավաքների հետ ունեցած հանդիպումների, անձնական շփումների և զրույցների մասին:

Ռ. Դրամբյանը գիտական ծանրակշիռ ժառանգություն է թողել: Նա մեկն էր նրանցից, ովքեր հայ միջնադարյան մանրանկարչության լուրջ և բազմակողմանի ուսումնասիրության հիմքերը դրեցին՝ այն դիտելով քրիստոնեական մշակույթի ընդհանուր համատեքստում, բայց միաժամանակ հատուկ ուշադրություն դարձնելով դրա ազգային ուրույն գծերին, հայկական մանրանկարչությունը դասակարգեցին ըստ դպրոցների, ուղղությունների և ոճերի, գիտական համոզիչ քննության ենթարկեցին առավել նշանակալից պատկերազարդ մատյանները, հընթացս բացահայտելով և բնութագրելով հայ միջնադարյան նկարչության ինչպես անվանի, այնպես էլ անանուն վարպետների ստեղծագործական մեթոդներն ու եղանակները:

Օժտված լինելով սուր ու դիտունակ աչքով, գեղագիտական զարգացած ճաշակով և պրոֆեսիոնալ նախազգացումով՝ Ռ. Դրամբյանը կարողանում էր գրեթե

անվրեպ որոշել արվեստի ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը: Նրան հաջողվեց ընդհանուր առմամբ վերականգնել XVII–XVIII դդ. հայկական կերպարվեստի պատմական զարգացման իրական պատկերը՝ մի բարդ ու խճճված ժամանակաշրջան, երբ բուն Հայաստանի տարածքում, ինչպես նաև հայկական տարբեր գաղթավայրերում ստեղծվեցին ինչպես ազգային արմատներից սնվող, այնպես էլ օտար ազդեցություններ կրող սրբապատկերներ, որմնանկարներ, հաստոցային դիմանկարներ և սյուժետային-թեմատիկ կոմպոզիցիաներ: Միջին դարերից դեպի նոր ժամանակները տանող այդ անցումնային՝ անորոշ, խառնակ դարաշրջանի արվեստից մնացած սակավաթիվ, գիտական լայն ընդհանրացումների և վերջնական ստույգ եզրահանգումների համար պակասավոր, անբավական նմուշները Ռ. Դրամբյանի գրչի տակ ձեռք բերեցին սեփական ձայնն ու լույս սփռեցին մի շարք կնճռոտ հարցերի վրա:

Նոր և նորագույն շրջանների հայկական կերպարվեստին նվիրված մենագրություններում ու հոդվածներում Ռ. Դրամբյանն անդրադառնում էր նաև ուսումնասիրվող նյութի ու առարկայի հասարակագիտական և պատմամշակութային ասպեկտներին՝ ներկայացվող արվեստագետների կենսագրության հիշարժան իրադարձություններին ու փաստերին, նրանց մասնագիտական ձևավորմանը նպաստած միջավայրին: Սակայն այս կամ այն վարպետի ստեղծագործությունը մեկնաբանելիս, արվեստի պատմության մեջ նրա տեղն ու դերը մատնանշելիս, աշխատանքները վերլուծելիս և գնահատելիս Ռ. Դրամբյանն առաջին հերթին, որպես պարտադիր պահանջ ու անհրաժեշտ պայման, հաշվի էր առնում դրանց գեղարվեստական մակարդակը, բնատուր տաղանդի և պրոֆեսիոնալիզմի առկայությունը: Հենց այդ դիրքերից, այդ չափանիշներով է նա մոտենում XIX և XX դդ. հայ նկարիչներ ու քանդակագործներ Եղիշե Թադևոսյանի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Գյուրջյանի, Հակոբ Կոջոյանի, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի և այլոց արվեստին, որոնց մասին առանձին մենագրություններ ու բազմաթիվ հոդվածներ է գրել՝ ամուր հիմքեր դնելով նշված վարպետների ստեղծագործության հետագա՝ առավել հանգամանալից և բազմակողմանի ուսումնասիրության համար: Նկարագրելով ու վերլուծելով նրանց աշխատանքները, արվեստաբանը բացահայտում է վերջիններիս պատկերագրական, ձևական-ոճաբանական, գաղափարական և գեղագիտական արժանիքները, յուրաքանչյուր արվեստագետի ստեղծագործական ձեռագրի տարբերակիչ հատկանիշները, գեղարվեստական կոնկրետ երևույթները դիտելով պատմական և մշակութային լայն ֆոնի վրա՝ համեմատական մեթոդի հմուտ կիրառմամբ:

Ռ. Դրամբյանն առանձնահատուկ համակրանք էր տածում նոր շրջանի հայ աշխարհիկ, ռեալիստական նկարչության հիմնադիրներից մեկի՝ Հակոբ Հովնաթանյանի արվեստի հանդեպ: Նա իսկապես մեծ, անգնահատելի վաստակ ունի

այդ փայլուն դիմանկարչի՝ իր տեսակի մեջ եզակի ստեղծագործական ժառանգության հավաքման, սիստեմատիկ ուսումնասիրության ու գնահատման գործում: 1939-ին Լենինգրադի Էրմիտաժում կայացած՝ իրանական արվեստին և հնագիտությանը նվիրված միջազգային երրորդ համաժողովում Հակոբ Հովնաթանյանին վերաբերող անդրանիկ զեկուցումից հետո[10] *Ռ. Դրամբյանը բազմիցս է անդրադարձել իր նախասիրած թեմային*[11]*: Նույն տարիներին՝ 1930-ականների վերջում, նա ավարտել ու սեղանին է դրել նկարչի մասին պատմող իր մենագրության առաջին, այդպես էլ չհրատարակված տարբերակը, իսկ գիտնականի երկարամյա, հետևողական համառ պրպտումների արդյունքն էր 2006-ին, արվեստաբանի մահից տասնհինգ տարի անց նրա դստեր՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գլխավոր գիտաշխատակից, արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանի ջանքերով Երևանում լույս տեսած* ,Акоп Овнатанянե *պատկերազարդ գիրքը, որի վրա Ռ. Դրամբյանն աշխատեց մինչև վերջին շունչը*[12]*:*

Առայժմ չեն հրատարակվել Ռ. Դրամբյանի ,Հիշողություններեն, որոնք, անկասկած, մեծ արժեք ունեն, քանի որ դրանց հեղինակը նշանակալից իրադարձություններով ու հանդիպումներով հարուստ կյանքի ճանապարհ է անցել, տարիներ շարունակ գտնվելով Հայաստանում տեղի ունեցած մշակութային գործընթացների վերնակենտրոնում, լինելով այդ ամենի ականատեսը և հաճախ նաև՝ անմիջական մասնակիցը: Բացի այդ, նա օժտված էր մեմուարիստի, հիշատակագրի հազվադեպ շնորհքով՝ պատմական փաստերի ու երևույթների նկատմամբ անաչառ վերաբերմունքով, իրեն հանդիպած հանրահայտ մարդկանց օբյեկտիվորեն բնութագրելու, ընթերցողներին հետաքրքրելու և գրավելու ունակությամբ:

Ռուբեն Գրիգորի Դրամբյանը երկար կյանք ապրեց, հասնելով իր ծննդյան 100-ամյակի շեմին: Նրա մահվանից անցել է արդեն 25 տարի, և գնալով է՛լ ավելի

---

[10] *Տե՛ս* Р. Г. Дрампян. Армянский художник Акоп Овнатанян и иранские влияния в его искусстве.– [Труды] III Международного конгресса по иранскому искусству и археологии. М.–Л., 1939, с. 56–59.

[11] *Տե՛ս, օրինակ, Ռ. Դրամբյան. Հակոբ Հովնաթանյան, Երևան, 1969 (նույնը՝ ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով),* Р. Г. Дрампян. Акоп Овнатанян.– II Международный симпозиум по армянскому искусству. Ереван, 1978.

[12] *Տե՛ս* Р. Г. Дрампян. Акоп Овнатанян. Ереван, 2006. *Այս գրքի, ինչպես նաև Հակոբ Հովնաթանյանի կյանքի ու ստեղծագործության ուսումնասիրման գործում Ռ. Դրամբյանի վաստակի մասին մանրամասները տե՛ս մեր հետևյալ հոդվածներում.* «Рубен Дрампян. «Акоп Овнатанян»» (Ереван, 2006).– ИФЖ, 2007, № 3, с. 246–250, *«Վաղուց պահանջված երկասիրություն».– «Կերպարվեստ», 2008, - 1–2, էջ 49–51,* «Неутомимый подвижник и бескорыстный служитель искусства (к 120-летию со дня рождения Рубена Дрампяна).– «Вестник общественных наук» НАН РА, 2011, № 4, с. 214–226.

պարզ ենք գիտակցում, որ այդ բարեկիրթ անձնավորության, իմացասեր գիտնականի, արվեստի անխոնջ մշակի և անշահախնդիր սպասավորի անունն իրավամբ պետք է դասվի մեր գեղարվեստական մշակույթի առավել արժանավոր և իսկապես վաստակավոր գործիչների շարքին: Ներկայիս հայ արվեստաբաններին, արվեստի պատմաբաններին ու քննադատներին Ռ. Դրամբյանն այսօր էլ արվեստին անմնացորդ նվիրվելու, մասնագիտությանը հավատարիմ մնալու, գիտական բարեխղճությունը չկորցնելու, սեփական դիրքերն ու սկզբունքները պաշտպանելու, ճշմարիտ մտավորականին վայել ազնվության և օրինավորության դասեր է տալիս:

Հ. Գ. 2012 թ. ԳԱԱ արվեստի ինստիտուտը դիմեց Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին՝ Ռ. Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Հայաստանի ազգային պատկերասրահի ճակատային հատվածում տեղադրելու հարցը քննության առնելու խնդրանքով: Նույն թվականին Երևանի ավագանին միաձայն կողմ քվեարկեց Ռ. Դրամբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին որոշման նախագծին: Իսկ ամիսներ անց՝ 2013 թ. հոկտեմբերի 12-ին, «Էրեբունի-Երևան 2795» տոնակատարության շրջանակներում, տեղի ունեցավ հուշատախտակի բացման հանդիսավոր արարողությունը:

ЗНАМЕНОСЕЦ АРМЯНСКОГО ИСКУССТВОЗНАНИЯ
(К 125-летию со дня рождения Рубена Дрампяна)

АРАРАТ АГАСЯН

Резюме

Исполнилось 125 лет со дня рождения видного ученого-искусствоведа, основателя и первого директора Музея изобразительных искусств Армении, заслуженного деятеля искусств Армянской ССР Рубена Григорьевича Дрампяна (1891–1991). Весом и значителен вклад Р. Дрампяна не только в организации и налаживании музейного дела в республике, но и в развитии армянского искусствознания, что нашло свое отражение в его многочисленных книгах, статьях и докладах, очерках истории изобразительного искусства Армении. Р. Дрампян был одним из тех, кто заложил прочные основы для изучения средневековой армянской миниатюры, рассматривая ее в контексте общехристианской культуры, но при этом специально обращая внимание на ее отличительные национальные признаки. В научных статьях и монографиях, посвященных армянскому искусству нового и новейшего времени, Р. Дрампян, кроме чисто художественных проблем, большое значение

придавал также социологическим и культурно-историческим аспектам исследуемого материала. Важное место в его деятельности занимала художественная критика. Ему принадлежит большое количество статей по насущным проблемам современного искусства, где лаконичные, но меткие характеристики и оценки отличаются объективностью суждений, строгостью и ясностью мысли.

THE FLAG-BEARER OF ARMENIAN ART STUDIES
(To Ruben Drampyan's 125th birth anniversary)

ARARAT AGHASYAN

Summary

125 years have passed since the day of the birth of prominent scientist, art critic, the founder and the first director of the Museum of Fine Arts of Armenia, Honored Art Worker of Armenian SSR Ruben G. Drampyan (1891–1991). Weighty is R. Drampyan's contribution not only to the organization and regulation of museum work in Armenia, but also to the development of Armenian art criticism, which has been reflected in his numerous books, articles and presentations, essays on the history of fine arts of Armenia. R. Drampyan was one of those, who laid solid foundations for the study of medieval Armenian illumination, regarding it within the context of overall Christian culture, specifically focusing, however, on its distinctive national features. In the scientific papers and monographs, dedicated to the Armenian art of the new and newest times, R. Drampyan, apart from pure artistic problems, also attached importance to sociological and cultural-historical aspects of the material under study. Artistic criticism was a major sphere of his activity. He authored a great many articles on the urgent problems of modern art, in which his laconic, yet pointed characteristics and appraisals stand out for the objectiveness of reasoning, strictness and clarity of thinking.